

նեայ ի ձեռն գեղեցիկ խնդրոյս յառաջ
 քան զմարմնոյդ՝ գիտցույդ ընկալեալ զծա-
 նօքութիւն...¹»:

Պատկերի պատմութեան հեղինակը ա-
 սոր վրայ կը ձեռք իր նամակը հետեւեալ
 կերպով.

«Զորդութիւն առատութեան աստուա-
 ծային հոգւոյն շնորհաց, որ ի վերայ քո
 անդուլ մտացդ, որ վասն գրոց ծանօթու-
 քեան եւ սիրոյ առ Աստուած, յառաջ քան
 գտեսութիւն ի ձեռն համբաւուց լուեալ իմ
 գլխահանութիւն մեծի հօգորդ ծանեայ,
 եւ այժմ ի ձեռն արժանափայլ խնդրոյս
 յառաջ քան զնկարագիր պատկերիդ եւ ըզ-
 տիպ մարմնոյդ, տեսեալ ի վրէժխնդրու-
 քիւն հոգւոյդ, գիտացի որ ի վերին շնոր-
 հացն է այս²»:

Հայոց պատմութեան հեղինակը՝ Խո-
 րենացիին՝ կը շարունակէ իր խօսքը վսեմ
 ոճով.

«Զի եթէ վասն բանին մեք, որպէս ա-
 սի, պատկեր Աստուծոյ, եւ դարձեալ՝ ա-
 ռափնութիւն բանականին է խոհականու-
 քիւն, եւ քո յայտասիկ անհատ ցանկու-
 քեան, ապա ուրեմն գեղեցիկ մտածու-
 քեամբ գլխահանութեանդ քո վառ եւ
 բարբոք պահելով զկայծակն, զարդարեա
 զբանն. որով մնաս առ ի լինելն պատ-
 կեր³»:

Պատկերի պատմութեան հեղինակն ալ
 նկատելով «բանին» մասին եղած այս խոր-
 հըրդածութիւնը՝ ինքն ալ իր կողմէ կը
 ջանայ ճապարհ ոճով այդ մասին խօսիլ.

¹ Մ. Խորենացի, «Մատենադրութիւնք», Վենե-
 տիկ, 1865, էջ 3:

² Մ. Խորենացի, Անդ, էջ 283:

³ Մ. Խորենացի, Անդ, էջ 3:

⁴ Մ. Խորենացի, Անդ, էջ 283-284:

⁵ Մ. Խորենացի, Անդ, էջ 284. Հմմտ. Մ. Խո-
 րենացի, «Պատմութիւն», Գ. ԿԵ. - «Զի եւ այլ եմ
 ձերացեալ եւ հիւանդոս»:

«Վասն որոյ եւ ինքն Բանն Աստուած ի
 ստեղծանելն զմարդն բանիւ զարդարեաց
 առ ի յօրինել եւ ի նանաչել գերախտա-
 գործն... վասն որոյ գրանին վառ եւ
 բարբոք պահելով զկայծակն անմահա-
 նամ...⁴»:

Ինչպէս յայտնի կը տեսնուի «Պատկերի
 պատմութեան» հեղինակը, նոյն խօսքերը
 եւ խմատները կ'արտայայտէ իր յառա-
 ջարան նամակին մէջ, առանց կարենալու
 տալ իր ոճին այն վսեմութիւնը եւ ար-
 ուեստը, զոր կը նշմարենք Խորենացիի
 պատմութեան յառաջարանին մէջ: Եւ ար-
 դէն իսկ կեղծիքի յայտնի նշան մը է՝
 երկու տարբեր անձերու ուղղուած նամա-
 կին մէջ միեւնոյն խօսքերուն եւ խմատ-
 ներուն կրկնութիւնը:

Պատկերի պատմութեան հեղինակը իր
 կեղծիքը հաստատելու համար փոխ առած
 է Հայոց պատմութեան դրքէն ուրիշ քա-
 նի մը բացատրութիւններ ալ, որ տեղի
 անտեղի կը դործածէ, ինչպէս երբ կ'ըսէ.
 «Գի զայլ ձեր հնացեալ մեղօք հրեշտա-
 կաց նմանեցուցէք⁵», կամ ուրիշ տեղ մը
 «Արդ մի ոք անուսումն զմեզ համարելով
 վասն կրկնարանելոյ զասացեալս ի մէջն⁶»:
 Այս ամէնը կը բռնադատեն զմեզ ըսելով.
 թէ «Պատկերի պատմութեան» դրութիւնը
 կեղծիք մ'է եւ ամենեւին պատմահօր հե-
 ղինակութիւնը չի կրնար ըլլալ:

ԿԵՂԾԻՔԻՆ ՇԱՐԺԱՆԻԹԸ

Ի՞նչ պատճառով եղած է այս կեղծիքը,
 պիտի հարցուի մեզի: Շատ դժուարին է՝

բենացի, «Պատմութիւն», Գ. ԿԵ. - «Զի եւ այլ եմ
 ձերացեալ եւ հիւանդոս»:

⁶ Մ. Խորենացի, Անդ, էջ 287. Հմմտ. Մ. Խո-
 րենացի, «Պատմութիւն», Ա. Բ. «Բայց մի ոք
 աստանոր անուսումն զմեզ համարեալ բարձրա-
 ցէ...»:

կուհիւ, եթէ նախ կարգաւոր այս պատ-
 մութիւնը կանխող՝ Մահակ Արծրունի իշ-
 խանին նամակը, որ նոյնպէս կեղծիք մ'է:
 Հոն Արծրունի իշխանը, իրեւ թէ կար-
 դացած Մ. Խորենացիի պատմութիւնը,
 հիացած անոր վրայ, իր ալ փափաքը ե-
 կած է ստուգելու Վասպուրականի մէջ
 յարգուած Տիրամօր հրաշագործ պատկե-
 րին պատմութիւնը «թէ ուստի՞ կամ յուժ-
 մէ՞ բերաւ յայն տեղի, զի բարոյս ինչ
 ալք ալլապէս պատմեն իրս ոչ նման մի-
 մեանց, եւ ոչ հաւատացաք ումեք զստոյգն
 զիտելի»:

Այս խօսքերէն կը հետեւի թէ, Հոգեաց
 վանքի, Տիրամօր հրաշագործ պատկերին
 շուրջ զանազան աւանդութիւններ կը շար-
 քեն, որոնցմէ ամէնէն աւելի՝ հաւատա-
 ցեալներու բարեպաշտութիւնը եւ հաւատ-
 քը արծարծողը եւ այդ վանքի միաբաննե-
 րու համար ալ սիրելի եւ շահեկանը պիտի
 ըլլար այն՝ ինչ որ յետոյ «Պատմութեան»
 նամակին մէջ պիտի դուրս գայ. այսինքն
 թէ՝ այդ պատկերը նկարուած էր կիւպա-
 րիս փայտի վրայ Յովհաննէս առաքեալէ,
 եւ Տիրամօր ձեռքով օրհնուած եւ իր ա-
 ղօթքով հրաշագործ զօրութիւն ստացած
 եւ Բարթոլոմէոս առաքեալին ձեռքով
 Հայաստան բերուած ու Հոգեաց վանքին
 մէջ զետեղուած էր, եւ մինչեւ այդ օ-
 րերը դոյութիւն ունէր եւ հրաշքներ կը
 կատարէր:

⁷ Մ. Խորենացի, «Մատենադրութիւնք», էջ 281-
 282:

⁸ «Եւ է տեղին յայն յորում զեւքն էին, լեռ-
 նամէջ վիմաց, ի վերայ գետոյն մեծի՝ որ կոչի
 Տիրիս, հուպ ի բերդն ամուր որ կոչի Կան-
 զուստ, եւ միւսոյն Աղուսաց քաղ, ուստի շուրջ
 րազումք հասին ի լեռանց ամբողջն ըստ դարձա-
 նային մասանցն, զան անցանն ընդ հիմունս տա-
 ճարին տիրուհւոյն, եւ խառնեալ օժանդակեն ըզ-
 զեան մեծ Տիրիս»: Խորեն. «Մատեն.», էջ 295:

⁹ «Զայս ցանկալի պատմութիւնս բարոյս ըզ-
 ձիւ եւ ցանկական յուզմամբ դրեալ մեծ հոգեւորն

Սահայն ո՞վ կրնար այս պատմութիւնը
 ստոյգ կերպով զիտեալ եւ պատմել: Ան-
 շուշտ հին նշանաւոր պատմադիր մը. առ-
 կից բնականաբար Մ. Խորենացիի անունը
 եւ հեղինակութիւնը պիտի յիշէր զայն յե-
 րեւողը, որպէսզի պատմական յարգ ըն-
 ծայէր իր յերկրած կամ արդէն դոյու-
 թիւն ունեցող աւանդութեան:

«Պատկերի պատմութեան» վերջաբանին
 մէջ տեղեկադրական այնպիսի մանրամասն
 տեղեկութիւններ կան Հոգեաց վանքի
 տեղւոյն եւ զերբին վրայ⁸, որ մեզի զգա-
 ցեալ կու տան՝ թէ հեղինակը այդ կող-
 մերը ապրող մը եւ տեղւոյն ծանօթ մըն
 էր: Ասկից կարելի է հետեւցնել թէ,
 «Պատկերի պատմութեան» յերկրոյն ըլ-
 լայ նոյն այդ վանքի արեւանդներէն մին.
 կամ անոր մօտ Սանահնի վանքէն մէկը:
 Վասնզի 1034-ին դրուած յիշատակարան
 մը՝ մեզի կը տեղեկացնէ թէ այդ պատմու-
 թիւնը կորսուած ըլլալով՝ օրինակ մը
 դառնուած էր Սանահնի վանքին մէջ եւ ան-
 դառնուած էր Սեբաստիա, որպէսզի Ար-
 կից տարուած Սեբաստիա, որպէսզի Ար-
 ծրունի Ատոմ իշխանը, որ արդէն հոն փո-
 խադրուած էր, զարձեալ ծանօթանար Հո-
 գեաց վանքի հրաշագործ պատկերին, զոր
 դուրսէն ինքը հետը Սեբաստիա փոխադրած
 էր:

Մովսէս որ կոչի Խորենացի եւ էր ընդ աղուս
 ասացեալ ի մերոյ յարկաց (sic!). եւ ուր ուրեք
 ասանէին մինչեւ ի ձեռն կրանաւորի միջ զը-
 տեալ՝ որ էր յերկրէն Խոր Հայոց, ի գաւառէն որ
 կոչի Զորոյ գետ, ի համբաւեալ ուխտէն Սանա-
 ին անուանեալ, պատահումն բարի իմն եղեւ. եւ
 հրամայեալ մեծն եւ լաւն ի բնաւ Ատոմ որդի
 Սենեբարիմայ Հայոց նահանգին (Վ)ասպուրական
 կոչեցեալ... Գրեալ էր ի ն. եւ Զգ. ամի Հայոց
 պատմութեան, ճառընա. ԻԸ. հմմտ. Հ. Բ. Սարգիս-
 տմարի, «Մայր 8 ուցակ Հայերէն Զեռագրաց», Վե-
 նետիկ, 1924, էջ 434:

